

## Կառավարությունը շարունակում է անտեսել էթնիկ փոքրամասնությունների լեզվական կարիքները

Փետրվարի 2-ին Քվեմո Քարթլիում աշխատող ադրբեջանալեզու տարածաշրջանային մեդիա կազմակերպություն՝ [interpress.ge](http://interpress.ge)-ի տարածած [տեղեկատվությամբ](#) Մառնեուլիի բնակիչ Մալիք Աղանն ասել է, որ Մառնեուլիի արդարադատության տան էթնիկ ադրբեջանցի աշխատակիցները տեղացիների հետ չեն խոսում իրենց հասկանալի լեզվով: Նրա խոսքով՝ պետական ծառայողները ռուսերեն են օգտագործում վրացերեն չխոսող քաղաքացիների հետ հաղորդակցման համար: Աղանի խոսքով՝ ազգությամբ ադրբեջանցի աշխատակիցն իրեն արդարադատության տանը ասել է, որ իրեն արգելված է խոսել ադրբեջաներեն:

Պետք է նշել, որ սա եզակի դեպք չէ, և նման պրակտիկա կենտրոնական և տեղական իշխանությունների համակարգային խնդիրն է: Քվեմո Քարթլիում, ինչպես նաև Սամցխե-Ջավախեթիում, բնակչության հետ հանդիպումների ժամանակ մենք բազմիցս լսել ենք, որ հանրային սպասարկման սրահները քաղաքացիներին չեն սպասարկում իրենց հասկանալի լեզվով: Հարկ է նշել, որ նմանատիպ պրակտիկա գոյություն ունի նաև Ջավախեթիում: [Jnews.ge](#)-ի տարածած [տեղեկատվության](#) համաձայն, Ախալքալաքի բնակչությունն իրավունք չունի հայերեն խոսել արդարադատության տան էթնիկ հայ աշխատակիցների հետ, ինչը հաճախ հանգեցնում է բնակչության և արդարադատության տան աշխատակիցների միջև տարաձայնությունների և թյուրիմացությունների:

Սոցիալական արդարության կենտրոնը տարիներ շարունակ աշխատել է պետության կողմից փոքրամասնությունների լեզվական ծառայությունների մատուցման ուղղությամբ: Մենք փորձում ենք այս հարցը բարձրացնել թե՛ կենտրոնական, թե՛ տեղական ինքնակառավարման մարմինների առջև: Այդ նպատակով մեր կազմակերպությունը Մառնեուլիի քաղաքապետարանի տեղական ինքնակառավարման դատարանում պաշտպանում է տեղացիների շահերը, որպեսզի ինքնակառավարման մարմինները փոքրամասնություններին հասկանալի լեզու օգտագործեն իրենց քաղաքացիների հետ հաղորդակցման գործընթացում: Նշենք, որ նմանատիպ դեպքերից մեկում Վրաստանի արդարադատության նախարարության ծառայությունների զարգացման գործակալությանը ուղղված հաղորդագրության մեջ գործակալությունը մեզ տեղեկացրել էր, որ գործակալության տարածքային գրասենյակներում և համայնքային կենտրոններում հաճախորդների համար (այդ թվում՝ ադրբեջաներեն) թարգմանչական ծառայություն չի գործում (նամ. 01/207762, 15.07.2019թ.):

Մեր գնահատմամբ՝ փոքրամասնությունների լեզուները վարչական վարույթից և ծառայությունների մատուցման գործընթացից ամբողջությամբ բացառելու պրակտիկան ազգային փոքրամասնությունների համար խնդրահարույց և պատակտող է: Այն դեպքում, երբ պետությունը չի ապահովում պետական լեզվի պատշաճ ուսուցումը փոքրամասնությունների համար, և գոյություն ունեն համակարգային զգալի խափանումներ վրացերենի դասավանդման գործընթացում, պետությունը պարտավոր է բոլոր պետական ծառայություններն ու ծրագրերը թարգմանել փոքրամասնությունների հասկանալի լեզվով: Այս դիրքորոշումը բխում է ազգային փոքրամասնությունների պաշտպանության եվրոպական շրջանակային կոնվենցիայից, ինչպես նաև Վրաստանի օրենսդրությունից:

Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին եվրոպական շրջանակային կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն (Վրաստանը միացել է 2006 թվականից), վարչական միավորը, որտեղ ավանդաբար կամ մեծ թվով էթնիկ փոքրամասնություններ են ապրում, պետական վարչական մարմինները առավելագույնս, պետք է ապահովեն փոքրամասնությունների լեզվի օգտագործումը, վարչական մարմնի և էթնիկ փոքրամասնության ներկայացուցչի հարաբերություններում կամ հաղորդակցման գործընթացում: Այս կանոնակարգը ծառայում է էթնիկ փոքրամասնությունների մասնակցության ամրապնդմանը հասարակության սոցիալական, քաղաքական, քաղաքացիական և մշակութային կյանքում և միևնույն ժամանակ չի օտարացնում նրանց այդ տարածքներից և թույլ է տալիս նրանց օգտվել հավասար սոցիալական, քաղաքացիական, քաղաքական և տնտեսական իրավունքներից: Հարկ է նշել, որ Եվրոպական շրջանակային կոնվենցիայով անդամ պետությունների համար այս պարտավորությունը ոչ մի կերպ չի սահմանափակում նրանց պետական լեզվի կարգավիճակը, այլ ավելի շուտ ծառայում է ազգային փոքրամասնությունների ինտեգրվելու և հասարակական կյանքին մասնակցելու իրավունքին: Կոնվենցիան անթույլատրելի է համարում որևէ լեզվի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելը, Վրաստանի քաղաքացիների լեզվական իրավունքները ոտնահարելը:

Վրաստանի "պետական լեզվի մասին" օրգանական օրենքի համաձայն, Վրաստանը պաշտպանում և ամրապնդում է երկրում լեզուների և մշակույթների համակեցության և ներդաշնակ զարգացման ավանդույթները: Նույն օրենքի 9-րդ և 11-րդ հոդվածների համաձայն՝ այն մունիցիպալիտետում, որտեղ կոմպակտ ապրում են ազգային փոքրամասնության ներկայացուցիչները, պետական և մունիցիպալ մարմինները իրավասու են սահմանել Վրաստանի ընդհանուր վարչական օրենսգրքով նախատեսվածից տարբեր կանոններ: Բացի այդ, պետությունը պետք է ապահովի, ազգային փոքրամասնությանը պատկանող անձի պետական և մունիցիպալ իշխանությունների հետ՝ հաղորդակցումը ապահովելով ազգային փոքրամասնության լեզվով թարգմանչի ծառայությունը: Անհրաժեշտության դեպքում պետական մարմինն ապահովում է ազգային փոքրամասնությանը պատկանող անձի կողմից այդ ազգային փոքրամասնության լեզվով քաղաքապետարանին ներկայացված դիմումի, բողոքի և պատասխանի թարգմանությունը:

Այսպիսով, պետական լեզվի վարույթում սահմանված կանոնը թույլ չի տալիս պետական մարմիններին անվերապահորեն մերժել էթնիկ փոքրամասնությունների լեզվական կարիքները: Կառավարման գործընթացում պետք է պահպանվի հավասարակշռություն, որն ապահովում է փոքրամասնությունների արդար վերաբերմունքը և կանխում գերիշխող դիրքի չարաշահումը: Հանրային ծառայություն իրականացնող ցանկացած անձ, հատկապես հանրային ծառայությունների զարգացման գործակալությունը և արդարադատության տունը, որոնք ամեն օր անհրաժեշտ ծառայություններ են մատուցում քաղաքացուն, ավելի մեծ պատասխանատվություն ունեն այդ գործունեության ընթացքում անհավասար և խտրական նախադեպեր չստեղծելու համար:

Թարգմանչի ծառայություններից օգտվելու իրավունքը կարևոր քաղաքացիական իրավունք է այն անձի համար, ով չի տիրապետում կամ լավ չի տիրապետում վրացերենին, ինչը մեծ մասամբ որոշում է ընթացքային կամ նյութական այլ իրավունքների պատշաճ իրականացումը, վարչական վարույթի հասանելիությունը: Հարկ է նշել, որ թարգմանիչից օգտվելու իրավունքը ներառում է բանավոր հաղորդակցության ընթացքում թարգմանչի օգնությունը, ինչպես նաև փաստաթղթերի պատրաստումը և նույն ծառայությունների մատուցումը:

Գործակալության արատավոր պրակտիկան, որը լեզվական արգելքի պատճառով մերժում է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին պետական ծառայություններից օգտվելու հարցում, հակասում է գործող օրենսդրությանը, իրավական, ժողովրդավարական և պլյուրալիստ պետության սկզբունքներին: Մինևույն ժամանակ, դա վնասում է ծառայություններ ստանալ ցանկացողների անհատական և օրինական շահերը և էթիկապես անհավասար դրության մեջ է դնում վրաց բնակչության նկատմամբ, ինչն իր հերթին խորացնում է համայնքի մեկուսացումն ու օտարումը:

**Ելնելով վերոգրյալից՝ սոցիալական արդարության կենտրոնը կոչ է անում Վրաստանի արդարադատության նախարարության ծառայությունների զարգացման գործակալությանը, կենտրոնական կառավարության այլ տարածաշրջանային գործակալություններին և մունիցիպալ մարմիններին ստեղծել թարգմանչական ռեսուրսներ ոչ գերիշոտ էթնիկ խմբերի ներկայացուցիչ քաղաքացիների համար, որպեսզի նրանց ծառայությունների մատուցման գործընթացում չանտեսվեն նրանց առանձնահատուկ կարիքներն և այդ անձանց իրավունքները չդրվեն անհավասար դրության մեջ, չոտնահարվեն նրանց իրավունքները:**

Նշենք նաև, որ Սոցիալական արդարության կենտրոնը պաշտպանելու է Մալիք Աղաևի օրինական շահերը: